ԵՐՋԱՆԻԿ ՆԱՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Զորի ԲԱԼԱՅԱՆ

Ձեմ սիրում գուշակներին ու մարգարեներին: Հարգում է գիտական կանխագուշակումը, որը խարսխվում է ինտուիցիայի և հաշվարկի վրա: Բայց ամենից շատ խոնարհվում եմ կանխագուշակման համաժողովրդական օժտվածության առջև, որը վեր է հառնում սերունդների միասնական փորձից, հավատից ու հույսից, ոգուց ու պայքարից: Եվ տարիներ շարունակ Ղարաբաղում, հաղորդակցվելով կանխագուշակման եզակի ձիրքով օժտված ժողովրդի հետ, ես դարձա... հավատացյալ: Ես հավատում էի ղարաբաղյան շարժման ծննդին, որը, ուրիշ խոսքով, կարելի է անվանել ստրկությունը ատող ժողովրդի սոցիալական ընդվզում: Հավատալով ղարաբաղյան շարժման գործունեությանը, ես արդեն չէի կասկածում, որ աշխարհը, վերջիվերջո, կլսի «Արցախ» հնչեղ ու հպարտ բառը, որ ազատության պես քաղցր այդ բառով կոչվող տասնյակ ու տասնյակ ընկերություններ ու կազմակերպություններ կծնվեն: Բյուրավոր վտակներից սնվող, հզոր գետի հորձանք հիշեցնող շարժման բուն պրոցեսում մենք արդեն գիտենք, որ իրականություն կդառնա Արցախի հայոց հողում ծնված հայ գրողների վաղեմի երազանքը: Երազանքը՝ գրական-գեղարվեստական, հրապարակախոսական մի հրատարակություն ստեղծելու մասին, որը պիտի կրեր հոգի մղկտացնող այն անունը, որն արդեն դարձել է Ղարաբաղի վերածննդի խորհրդանիշ, իրականացել է: Եվ հիմա դու, իմ թանկագին հայրենակից, ժամանակակից, ձեռքիդ բռնած ունես հայ գրողների առարկայացած, շոշափելի երջանկությունը՝ «Արցախ» հանդեսի առաջին համարը: Այս փաստն ինքնին ղարաբաղյան շարժման առարկայական ու շոշափելի հաղթանակն է:

Ես ուզում եմ հավատալ, որ «Արցախը» ամեն բան կանի, որպեսզի էլ ավելի բարձր պահվի ղարաբաղյան շարժման մաքուր դրոշը, շարժում, որի ընդերքում տաղանդներ են ծնվում: Եվ մենք «Արցախի» էջերում կտեսնենք նոր անուններ, ովքեր կբացեն դեպի տաճար տանող ճանապարհներ: Դեպի Գանձասարն ու Ամարասը, Դադիվանքն ու Ղազանչեցոցը, դեպի նորածնի ճիչն ու մոր դեմքի ժպիտը: «Արցախն» ամենից առաջ պետք է գովերգի Արցախը՝ հայ պատմության ու մշակույթի հազարավոր անկրկնելի հուշարձանների հայրենիքը, հայ ժողովրդի վեհ ավանդույթների և վեհ ոգու հայրենիքը:

Փառք աստծո, նորածին «Արցախը» վերակառուցման ձեռքից անմիջապես մի այնպիսի զորեղ զենք է ստանում, ինչպիսին է հրապարակայնությունը: Այսօր, ինչպես ուրիշ ժամանակ՝ երբեք, մենք պետք է արհամարհելով վախկոտությունը, փրկենք մարդկանց՝ հակառակ նրանց իսկ ցանկության: Պատմությունը բոլորին և ամեն ինչ իր տեղը կդնի: Գովերգելով անցյալն ու ներկան, անհանգստություն հայտնելով գալիքի համար, ղարաբաղցին երբեք չի մոռանում, որ մարդ պետք է ուրքով արմատված լինի հայրենի հողի, Արցախի հողի մեջ, իսկ հայացքը նրա բոլոր ընդգրկի համայն աշխարհը: Հանդեսը, անտարակույս, հավատարիմ կլինի Լենինի կարևորագույն գաղափարներին, խոսքերին, որոնցից մեկն ուզում եմ մեջբերել բառացիորեն. «...Ավելի լավ է անհաջողությամբ ասել ճշմարտությունը, քան լռության մատնել այն, եթե գործը լուրջ է»: Իսկ Ղարաբաղի գործը, ղարաբաղյան գործը այսօր շատ լուրջ է: Մեր պապերը լավ գիտեին, որ ճշմարտությունը տկողնու բարակ, կանաչ մատղաշ շիվի պես կարող է ճկվել, բայց այն երբեք չի կոտրվի և լողալով դուրս կգա կեղծիքի երեսը, ինչպես յուղը՝ ջրի երեսը... Զէ՞ որ մենք շարունակում ենք հիշել իմաստունի այն խոսքերը, որոնք հիանալիորեն բացատրում են ղարաբաղյան շարժման էությունն ու իմաստը. «Եթե դուք ճշմարտությունը թաքցնեք և հողի տակ թաղեք այն, նա անպայման ծիլ կտա և մի այնպիսի ուժ կստանա, որ մի անգամ էլ, երբ հողը պատռի դուրս գա, ապա իր ճանապարհին կոչնչացնի ամեն ինչ»:

«Արցախը» լույս է տեսնում, թերևս, ողբերգական և, ինչպես ընդունված է ասել, մեր ժողովրդի համար

բախտորոշ ժամանակներում: Ժամանակը մեր ես կանվանեի մի անհրաժեշտություն, որը սրում է ողջախոհությունը: Եվ նորածին հրատարակությանը, նրա հեղինակային կոլեկտիվին, առանձնապես երիտասարդ շառավղին, այսօր անհրաժեշտ է սովորել ոչ թե գրել, այլ՝ տեսնել, կանխատեսել, մաքառել ծնունդ առնող չարի դեմ, բուն չարի կոնցեպցիայի դեմ: Իսկ գրելը ընդամենը հետևանք է: Եվ եթե մենք այսպես համառորեն ու համառորեն հարցում ենք անում ու քննում անցածը, անցյալը, ապա միայն նրա համար, որ այն պարզաբանի մեզ մեր ներկան, որպեսզի կանխի դրժբախտությունն ապագայում:

Հասակ առնելով անուշաբույր թթենիների և հոյակերտ բրիստոնեական տաճարների մեջ, արցախցիները ծագումնաբանորեն երբեք կրոնական ֆանատիկոսներ չեն եղել: Սակայն, ի մեծ դժբախտություն, դահիճ Ստալինի կողմից հայտարարված բռնի «մաքուր» աթեիզմը հանգեցրել է ամբողջ երկրի և ամբողջ Ղարաբաղի տասնյակ հազարավոր տաճարների կործանման: Դահճի կողմից դա հանգեցվում է նրան, որ չի կարելի դառնալ «մաքուր» աթեիստ: Քանզի, հերքելով աստծուն, միաժամանակ հերքում ենք և՛ սատանան, և չարիքը: Իսկ սա էլ հենց այն է, ինչը պետք է Սատանային, Չարին, Ստալինին: Պետք էր, որ մենք մրտածեինք, թե չկա սատանա, չկա չարիք, չկա Ստալին-դահիճ: Այստեղից էլ՝ զանգվածային հիպնոզը: Այստեղից էլ՝ անպատժելիությունը: Անպատժելիորեն չարիք գործելու հնարավորությունը: Այնպես որ, մենք ոչ միայն հայրերի ու պապերի նկատմամբ ակնածանքից ու հարգանքից ելնելով պետք է վերականգնենք ստալինների և բաղիրովների կողմից ավերված տաճարները, այլև այդ բանը պետք է կատարենք՝ ելնելով մեր հողի վրա չարի կոնցեպցիայի դեմ պայքարի ըզգացումից: Ու կամենում եմ հավատալ, որ «Արցախը» կստանձնի Արցախի հուշարձանների վերականգնման շեֆությունը:

Հանդեսը ես պատկերացնում եմ գետի ջրերում լողացող նավակի տեսքով, որը կրում է «Ղարաբաղյան շարժում» անունը: Այն գետի ջրերում, որը հոսում է դեպի հայոց ինքնատիպ մշակույթի ծովը: Առջևում մորկահողմեր և փոթորիկներ են: Հայց առջևում է մեծ նպատակը, որը միայն մեկ աստծո՝ Արդարության հավատացող արցախցու համար մարդկային արժանապատվության միջուկն է հանդիսանում: ■